

ՁԵՌԱԳՐԱԿԱՆ

ՑՈՒՑԱԿ ԶԵՌԱԳՐԱՑ

ՀԱՐԹՔԸՐՏԻ ԱՍՏՈՒԱԺԱԲԱՆԱԿԱՆ ՃԵՄԱՐԱՆԻ

«Այլ զսամիթն . զինով եփէ , և յաչքն կաթեցոյ : Աչքն որ ըրջկոտ լինի և կոպերն ուռենայ . առ աղեկ եսան մի , և դանկով քերէ զեսան . և առ զքերուքն պահէ . և ապայ առ անծակ զղթոր մի և լոսէ և մտղէ , և աղջկան մօր կաթեամբ շաղէ զերկուօն և աչքն զիր . ապայ զկաթն ի գէր կնկան առ : Աչքն որ ուռենայ զշուշման զինով եփէ և ի վերայ զիր : Այլ աչքն որ վատ տեսնու առ զսպիտակ խոռովի լեզին , և աղջկան մաւր կաթեամբ միաչափ արայ , և յիրար խառնէ և աչքն զիր :

«Աչքն որ մազ կայ , զտեղն կաշովն հան . և ի տեղն գորտուն արիւն կաթեցոյ , այլ չի բուսանի : Աչքն որ արեղակն չկարէ հայիլ , զմորենուն տակին կեղեն եփէ . և չորացոյ և լաւ մանր և աչքն զիր : Աչքն որ սպիտակ լինի . պատեղվոր կնոջ խիժ կաթեցոյ աչքն . Գ(երեք) աւր : Ապայ թէ սպիտակն հինէ զմարդուն սկաւառակն այրէ՝ զեկուրզն և զհում շաքարն . ողկէ միաչափ յիրար խառնէ և աչքն զիր : Այլ զմարդուն ակռան ողկէ . և հում շաքարով յաչքն զիր , զիբքն տանի : Աչքն որ ցաւի , զպաղ շաքարն կաթեամբ աչքն զիր :

«Աչքն որ ուռենայ . քրքում և հաւկըթի դեղնուց յիրար խառնէ և զիր :

«Այլ զոսկի զեղ չիրն զատարկ աչքդ անցոյ : Խոկելոյ վատ է :

«Այլ զանծակ մարդարիսն ողկէ . և աչքն ձգէ նոյնակս առնէ :

«Աչքն որ հաւկուր լինի , առ զկաթլութիկ բանջարն , և օճու խորիս միաչափ , չորացոյ և լոսէ . և հաւկըթի դեղնուցով աչքն զիր :

«Աչքն որ սպիտակ լինի , ողկէ և ձգէ որ նոսրցնէ : Եւ ապայ առ զկաթլութիկ բանջարն և զսե օճու խորիս . և քարթաւչի ծիրտն . որպէս ծարուր արայ և ձգէ . և յետոյ երբ ողջանայ , տուզ չաման ծեծէ մանր . և ի հաւկըթի դեղնուցն ած . և խորիժ . և տաք յաչից վերայ զիր՝ ապայ այս դեղրանքս ի Ռ (1000) ընտրած է» :

իջ 51ր . Երուսաղէմի Յկարագրութեան շարաւնակութիւնը : Անխնամ և տգէտ կագմողը խառնիխուուն կագմած ըլլալով , թերթերը ետ առաջ եղած են :

իջ 60ր . «Տաղ Առաքելի ասացեալ Աստուածածնի» Աթեան տաղ : Ասոր կը յաջորդէ «Տաղ Նարեկացոյ է ասացեալ» : իջ 61ր . վերև կայ յատակ չտրադուած ուրանիկուն կնիք մը՝ «Ք(րիստոսի) Ծ(առայ) Կիրակոս» : Ասկէ վերջ՝ տաղեր : Յետոյ վարդի և սոխակի տաղ մը , սկիզբը պակաս .

Մաղկանցն ամենայնի պարծանք ցուցանեմ :

Վարդն ի պլապուն ասաց Ես դիմակաց չեմ ,

ի ծագմանէ լուսոյն դողալով արսեմ .

Վախեմ թէ զարեղակն առ իս տեսանեմ ,

Զտերևս իմ գեղեցիկ յիսնէ թօթափէ :

Պլուտըն ի վարդն ասաց թէ զովելի ես,
Զի զամենայն ծաղկանց դու ցանկալի ես,
Տեսով քո արբեցայ գերդ զզինով ես,
Արարին աստուած կանանչ պահէ քեզ:

Վարդն ի վարդուն ասաց զեղեցկածայն ես,
Որ զամենայն մարդիք դու ուրախ տոնես.
Ազգի ազգի գունով դու եղանակես,
Թռչնոցն ամենայնի տէզ պարծանաց ես:

Ես Առաքել մեղօք լցեալ յաշխաբէի.
Որ զալպույն ի հետ վարդին սակաւ զովեցի,
ի գարրիէլ Հրեշտակն յօրինակեցի,
Եւ ի կոյս Մարիամ ծնաւդ Յիսուսի:

Զձեղ աղաւեմք եղբարք տաղիս Հանդիսողք,
Եղանակէք սիրով ճայնիւ բերկրալի,
Յիշէք զմէդ և տաէք Աստուած ողորմի,
Եւ դուք արժան լինիք տեսոյն Քրիստոսի:

Ասկէ վերջ «Տաղ զարիպի»: Էջ 69ր. «Տաղ սուրբ Երուսաղէմայ», Յակոբ բանանի տապահեալ է «Հաղար ոթուն և Հինդ թիւրն ի լրման», այսինքն 1636ին գրուած:

Էջ 72ր. դարձեալ Երուսաղէմի նկարագրութեան մաս:

Թիւ 12 (Հաւաքիման A 195/45)

ԺՈՂՈՎԱԾՈՒ

Ծաւալ՝ 12×17 սմ.: Գրչուրին՝ միասին, մանր նոտրդիք, 31 տաղ:
Նիւր՝ թուղթ: Կազմ՝ կաշևպատ տախտակ, գրոշմաղարդ, վնասուած: Հանգամանք՝ խոնաւութենէ թուղթը վնասուած սոսրին մասերը: Մաղկում՝ անհրշան: Պահպանակ՝ մաղպաթ երկաթազիք թերթի մէկ չորրորդը: Կտոր մը բակիզը և հատ մըն ալ վերջը: Կը կարդացուիք: «Եւ այս կանոն կատարի Սաղմոս ձմ՛ Կցուրդ փոխանակ սիրոյ մատն»: Կարմրաւ. «Աւելաքան բատ Յովհաննու». Յովհաննու նոր զրչէ մը ջնջուած և վրան «Լուկաս» գրուած: Յեռազրին վերակցուրեան ատեն սկիզբը աւելցուած է երկու թերք, եսկը՝ բազմարիւ: Սկիզբի բուդրերէն 1ա. ին վրայ նոտրդիք կայ սա ցանկը, ըստ երկուրին անձնական գրադարանի մը: «Այս է իմ Արքահամու գրեանց թիւր: Ասկան սատուաչունչ մը: Խարիկոց: Առաքնոց Լուծմունքու Բ(երկու) տրամարանութեան զիրք: Ա(մէկ) Պատմութիւն մէկ զրչայ: Գրչայ սահմանաց զիրք: Բ(երկու) Սիմեոնի քերականութեան զիրք մէկ պասմայ (տպագիր) մէկ զրչայ: Վէմ Հաւատոյ զիրք: Ֆիլ Տօնացոյց: Գ(երեք) Շարական: Բ(երկու) պասմայ մէկ զրչայ: Գ(երեք) էլ Սաղմոս: Առաքինութեանց զիրք: Աղրիւր Բարի զիրք: Հայելի Վարուց մը: Բ(երկու) Եւազը: Յիսուս Որդի զիրք մը: Առաքել պասմայ զիրք: Բ(երկու) Պղնձէ Քաղաքի պատմութեան զիրք»:

Բուն ձեռագիրը կը սկսի «Յաղագս Քերականութեան Համառաւտ լուծմունք ի Տէր Առաքելէ Սիւնեաց և պիսկոպոսէ: ի մեկնութիւն քերականութեան: Պէս սղէս յատկութեամբ պարզեալ վասն դիւրաւ Հասկանալոյ զիսորութիւն բա-

նից քերականին Յաղագս նախերդան ի քերականութեանց Առաջին որ ասէ Յաղագս Քերականութեան» :

Էջ 123ա . գրչութիւնը կը փոխուի . «Այս ինչ է բնարան Պորֆիրի» :

Էջ 127ա . կարմրաւ . «Նորին Գրիգորի Աշակերտի համառօտ տեսութիւն ի զիրս Պորֆիրի» : Էջ 147բ . որմէ վերջ չորս թերք նորոգողի գրչէ : Յանիս վերի անկիւնը ցեցակիր :

Էջ 184ա . «Եռամեծին Յովհաննու Հայոց փիլիսոփայի և վարդապետի հաւաքութիւն համառօտ վերլուծութեան ստորոգութեանց Արիստոտելի ի Գրիգորէ աշակերտէ» :

Էջ 249ա . «Նորին Յօհաննու Արուտնեցոյ հոմառաւուտ լուծմունք Պէրիարմէնի գրոցն ի Գրիգորէ աշակերտէ» :

Էջ 312բ . «Նորին Գրիգորէ աշակերտի Յովհաննու մեծի համառօտ լուծութիւն Առաքենութեանց Արիստոտելի» մինչև ձեռագրին վերջը , թերք 330 , սակայն վերջին ինը թերքը նորոգողէն գրուած : Թերք 330էն վերջ պարապ :

Թիւ 13 (Հայագման A 195/23)

ՊԱՏ . ԹԻՄՈՒՐԼԵԿԻ ՄԵԾՈՒՔԵՑՈՅ

Ժաւալ՝ 12×15 սմ . : Գրչութիւն՝ միասին , նոտրգիր , 24 տող : Նիւթ՝ թուղթ : Կազմ՝ կաշեպատ ասխոտակ գրոշմաղարդ : Աստառուած բամպակեայ տպածոյ լամով : Մաղկում՝ անհան : Հանգամանք՝ լաւու կատարեալ : Ներսին կողքին մատիսով , անդյերէն . «Հայերէն Պատմութիւն Թիմուրլէնկի» :

Էջ 1ա . կարմրաւ . «Պատմութիւն համառօտարար վասն յարեւելիան թագաւորացն պղծոյն և չար գաղանին Թամուր Լանկ անուն զոր աւերեալ զաշխարհս արեւելից մինչև ի ծովն Ոկիանոս , և այլոցն արարեալ քաջ մարժապետին Թովմայ վարդապետի» : Վերջը Էջ 61ր . գրչէն . «Մանաւանդ և ինձ տառապեալ անձիս Յովհանէսի . բանասերի , և սակաւ գծագրաւդի զապատմութեան քաջ հատուորդէս մերում Թումա մեծ վարժապետի Կաֆացո . Զոր սկսեալ ի յարեւեան թագաւորացն և ի չար գահէն Թամուրայ , մինչ ի կէտ կոշմանն զրոյ եցոյց և եւաս առ մեզ յետնինքո զոր բնթերցեալ տեսաք ի փափաքմամբն տիրացաք ի Ռ.թ(1590) թվականիս» :

Էջ 62բ . «Այս են չուք որդոցն Խորակէի» : Յետոյ . «Վասն միարանութեան Հայոց , և կաթուղիկոս ձեռնազրութեան» (Հրատարակուած Արարատի մէջ , Էջմիածնին , «Նոր Սիւթեր» , Գարեգին Արեւապ . Յովսէփեանէ) : Ասոր կը յաջորդէ «Յաղագս Էջմիածնի Աւրենուրեան Ջենադրութեան» :

Էջ 75ա . «Վասն աքսորման Տէր Կիրակոս կաթուղիկոսի» :

Էջ 81բ . «Պատմութիւն մեծի բարունապետին Թումայի , զոր արարեալ Կիրակոս բանասէր վարդապետի» (Նոյնապէս հրատարակուած Գարեգին Արեւապ . Յովսէփեանէ 1914ին , Վաղարշապատ) :

Էջ 88ա . կարճ գրութիւն մը որ կ'աւարտի երկրորդ էջին վրայ . «Արքա՞ն են և ո՞րք զիրք սուրբք հին և նոր կտակարանք» : Յեռագիրը կ'աւարտի :

Թիւ 14

ԱԼԵԾՈՒՐԱՆ

1222

Թերք՝ 282 : Ժաւալ՝ 16·5×25·5 սմ . : Գրչութիւն՝ հին բոլորգիր , երկ-

սին, շագանակազոյն մելան հետպհետէ զունաթափ, 20 տող: Կազմ՝ կաշե-կազմ արծաթազարդ : Նիւր՝ թուղթ :

Էջ 1ա. սիրուն և ո՛չ հասարակ խորան և լուսանցազարդ սկիզբն Մատ-քեսի: Թերը 75ը վերանորոգողէ: Ստորին լուսանցքին. «Ո՞յ սուրը եղբայրք որք հանդիսակիք այս սուրը աւետարանիս կարդալով կամ աւրինակելով, յիշե-ցէք ի մեղսաքաւիք: աղաւթօ ձեր զԱխմէոն քահանայ վանից, որ ստացաւ զայ-յարդար ընչից իւրոց յիշատակ իւր և ծնողաց իւրոց և ամենայն աղգայտոնմից կենդանեաց և ննջեցելոցն: Ընդ նոսին և դիս գմեղաւթ լրցեալ ոգիս զՄարդուրէ, որ սակաւ մի աշխատեցա ի սայ ի համարքն դրել, և թուխթս որ պակաս էք և կտրեց ու գրեցի: Եւ աստուած ձեզ յիշողաց և մեզ յիշեցելոցս ողորմեացի յարդար դատաստանին, և նմա փառք ամէն»:

Էջ 131բ. գրչէն. «Աւետեաց բաշխող քրիստոս առաստապարդ պարզե-եայ մեղսասէր անձին գրչի թողութիւն մեղաց և ստացողի սորա ամենայն մե-ղաւորաց զի կարող ես յամենայնի և քեզ ընդ հաւը և սուրը Հոգւոն մառը յաւիտեանս ամէն՝ ամէն»:

Էջ 281ա. գրչէն զլխաւոր յիշատակարանը. «Ճնորհիւ տեառն սկսա և ողորմութեամբ նորին կատարեցի զրդալիս յոքունց: Որոմ փրկեցան համաւ-րէն ծնունդ Աղամատ. ազատեալք ի մեղաց: և զերծեալք ի խաւարէ կատառա-տութեան զալստեամբ տեառն մեր Յիսուսի Քրիստոսի յաշխարհս: Որպէս ծանեաք զհայրն, և զուրը Հոդին, լուսաւորեալ և նորոգեալ. և նորափետուր զարդարեալ, աւազանաւն մաքուր յորում որդեղքիմք երկնաւոր հաւըն առհա-ւատչեա առեալ պարզե զողին սուրը, վարդապետութեամբ տեառն մերու, Յի-սուսի Քրիստոսի: Արդ չորեք վտակեան անծայրածաւալ ծուս յորեքնորեան տիեզերս բոլոր սեաից. ենթակայացեալ բաղկացութեամբ ի մի. առ ոգեաւ ար-րուցանէ իրը զմի որախատ: Վասն զի և դշեղեալ բանն ի ծոցոյ հաւը ամենատի ա-րարածք անոյշութեամբ լցան. ըստ ճշգրիտ և անհաս պատմութեան, առընթեր վիային մերձ կացելոյ անկելոյ զլանջաւթ տէրունական, տեղեկացեալ և հասու-լեալ անհաս խորին խորհրդոց մեծին աստուծոյ, ծանուցանէ տիեզերաց զաստ-ուածութիւնն որդւոյ, Հանդերձ իրիւք ընկերիւք աստուածարանեալ Մաթէոս, Մարկոս, Ղուկաս, Յոհաննէս: Մամ բազմացեալ միայնացեալ Աստուածատուր անուն յորժորժի, ի միեթարութիւն հոգւոյ և մարմնոյ յար ընդ նմա խաւասկ-ցելոյ, և յես մահու յիշատակ իւր և ազգատոհմի իւրոյ: Արդ ես ողբալիս և հոգով մեռեալս անուն Գրիգոր կոչեցեալ վցուն մտաւթ և գրչաւ աղաչնմք զա-մենեսեան չլինել մեղադիր խոչորութեան զրոյա. զի թեարեալ և ... բայց տա-ռիս դառն. զի անաւրէնք յամենայն կողմանց գերեցին զաշխարհս կիլիկեցւոց. զի թագաւոր ո՛չ զոյր, և իշխանն անհնագանդ իրերաց մինչ աստուած կամե-ցաւ և թագաւոր ետ և սակաւ մի խաղաղացաւ յայս գառն ամքս ես անհանդիս ի տեղիս տեղիս փոփոխելով աւարտեցի զիիրս յնտիր աւրինակէ, յանապատս Փոս կոչեցեալ ընդ հովանեաւ սրբոյ Աստուածածնիս և այլ սքանչելագործ սր-բոց և ի մէջ...որ եղբարց. և ընդ իր առաջնորդի որ զպետս մարմնականս ան-թերի պահեր և յորդորեր ի զիրս, և զայն որ զառաջի զզիրն և զծաղիկն զար-դարեաց, և զամենեսեան որ աւգնական են լեալ, և որ հակառակ լեալ են ինքն զիիտ զի խիստոյժ ինձ հատոյց. և այն ի չարեն էր ամենայն որ ասատն է ես ուր ստացէ ամենեցան յանպակաս պարզեացն մասն բարեաց յիշողաց և յիշե-ցելեացգ առ հասարակ: Եւ նմա փառք յաւիտեանս, և յազանին այժմ և միշտ

յամեն ամէն և ի թուտկանս ՈՀԱ (1222), և կաթողիկոս Հայոց Կոստանդին, և թագաւոր Փիլիպպոս, յայսմ ամի Հաստատեցան յաթոռս. Քրիստոս Աստուածըստ կամաց իւրօց Հաստատուն պահեցէ . . .» :

Հսո յիշուած Կոստանդին կարողիկոսը Բարձրբերդցին է, որուն համար Գրիգոր զրիչ կը վկայէ որ «յայսմ ամի (ՈՀԱ—1222) Հաստատեցան յաթոռութ», թէ Օրմանեան Կոստանդին Բարձրբերդցին 1221ին կարողիկոսական արոռ բարձրացած կը նկատէ: Հայոց ՈՀԱ կամ 671ը կը սկսի Յունուարի 25 1222ին: Գրիշը իրաւունք ունէր յիշատակագրելու որ «անաւերէնք յամենայն կողմանց զերեցին զաշխարհս Կիլիկեցւոց. զի թագաւոր ո՛չ դոյր, և իշխանոն անհնագանդ իրերաց մինչ աստուած կամեցաւ և թագաւոր ետ և սակաւ մի խաղաղացաւ»: Արդարի Կիլիկիոյ արքայական գանձը քափուր մնաց երկու տարի, որովհետև կարելի չեղաւ համաձայնի Հայ իշխանի մը վրայ: Զավել հազիւ եօր տարեկան էր և բոլորովին անյարմար, որով որոշուեցաւ Անտիոքի դուքսին Փիլիպպոս կամ Ֆիլիպ որդին ամուսնացնել Զավելի և զինք Կիլիկիոյ քագաւոր իր Հերում տղան ամուսնացուց Զավելի:

Զեռագրին վերջը պահպանակ քուրք Ա. Էջին, նատրգիր. «Ի վերջին յիշատակ է սուրբ աւետարանս Ըստամատանին կնոջն Մառային, որ ետուր իւր Հաւալ ընկիցն ԺԵ(15) Փլորի և առօ այս սուրբ աւետարանս և երես յիշատակ իւր Հոգոյն Յաղման ի դուռն սուրբ Յակոբին և սուրբ Պօղոսին ամէն ով ոք չունի իշխանութիւն ծախսելոյ և գրօնելոյ թէ որ անդքինին նա մասն Յոդայի առցեն և անեճքն Կայենի: Գրեցի սուրբ տառս ձեռամքն Ըստապատու Հոգ և մոխիր Պօղոս երիցուն, ով ոք այս տառիս Հանդիպակիք ասացէք աստուած ողորմի Մառային Հոգոյն և զրչիս Տէր Պօղոսին աստուած ողորմի ձեր անցեաւ ննջեցելոցն և ձեր կենդանի Հոգոյն ամեն: Գրեցաւ վերջին յիշատակս ի թիին ՌՃ (1651):»

* * *

Հաւաքման մէջ կայ նաև հայատառ քազմօրինակ լրւսատիա «Իննիլա Ք Մատրէոսն վիսի»:

Յ. ՔիիրՏելեն

(Նար. 3 և վերջ)